ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 173-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 1-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Նարեկ Նիկալի Դալլաքյանի /մուտք՝ 18.04.2024թ. թիվ 226/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Բավարարել Նարեկ Նիկալի Դալլաքյանի դիմումը և ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, Փոքր հրապարակ 1 հասցեում գտնվող հողամասում (ծածկագիր՝ 06-035-0064-0010, վկայական՝ 06102023-06-0008) խանութի կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:
2. Շինարարական աշխատանքները սկսել համայնքապետարանի կողմից տրամադրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:
3. Համայնքապետարանի բյուջե վճարել 15000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 22
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 174-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-035-0088-0008 ծածկագրով 0.10966համակերեսովանշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ 60-րդ փողոց,10 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. ապրիլի 23
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 175-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-81-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2024թ. մարտի 22-ի N 23-Ա որոշումը՝ Որոշում եմ.

1. 2024 թվականի մայիսի 27-ին ժամը 11^{00}-ին հայտարարել անշարժ գույքի վարձակալության մրցույթ 1 լոտով:
Լոտ 1. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0174-0005 ծածկագրի 0,55248 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով:
Մեկնարկային գինը սահմանել 12000 ՀՀ դրամ, մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%–ի չափով,մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ:
2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում,բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չի խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
3. Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների աճուրդային և մրցույթային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող մրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Առավոտ» օրաթերթում,հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում ինչպես նաև հայտարարությունը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 23
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 176-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, տրված՝ 22.04.2024թ. /գրանցված է սեղանամատյանում N 1536,գործ թիվ 113, և քաղաքացի Արարատ Արծրունու Քոչարյանի /մուտք՝ 22.04.2024թ. թիվ 233/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Արարատ Արծրունու Քոչարյանի /ծնված՝ 15.05.1962թ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 8-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 8հասցեի 06-035-0070-0019 ծածկագրում գտնվող 0,15833 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

3. Բնակելի տանը և զբաղեցրած հողամասին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ 8-րդ փողոց,2-րդ փակուղի,8 բնակելի տուն>> հասցե:

4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2024 թ.ապրիլի 23
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 177-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,24-րդ կետով,38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 22-ի <<Թումանյան համայնքի 2024թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 101 -Ն որոշումը, Թումանյան համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 19-Ա որոշումը ,Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. օգոստոսի 17-ի <<Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու համար հանձնաժողով կազմելու մասին>>թիվ 234-Ա որոշումը և Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ.

Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 /Թումանյան համայնքի նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ**

20 24 թ. ապրիլի 25
ք.Թումանյան

Հավելված
Թումանյան համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 25-ի N 177-Ա որոշման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ըստ ստացված դիմումների՝ Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի ներքոհիշյալ նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն.

1) Մելքումյան Արծրուն Գուրգենի – ք.Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
2) Եգանյան Էլյա Գարիկի - գ.Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
3) Անտոնյան Արուս Գագիկի - գ.Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
4) Մամաջանյան Մելինե Արթուրի - գ.Դսեղ -20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
5) Ավագյան Սոնա Սեյրանի – գ.Քարինջ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**